



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“.....” 2026թ.

N..... - Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԱՎՏՈՄՈՔԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ակտիվների կառավարման, տվյալների հավաքման և վերլուծության իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ՝

**Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ
ք. Երևան**

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈՔԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) հաստատվում է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների (այսուհետ՝ ավտոմոբիլային ճանապարհներ) (բացառությամբ Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների) ակտիվների կառավարման, տվյալների հավաքման և վերլուծության իրականացման կարգը:

2. Ճանապարհային ակտիվների կառավարման համակարգը ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառույցների և դրանց կառուցվածքային տարրերի տվյալների հավաքման, կառավարման և վերլուծության համակարգ է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհային ցանցի պահպանման և զարգացման ծրագրերի կազմման և դրանց իրականացման բնականոն գործընթացի ապահովման համար, և հանդիսանում են ակտիվների կառավարման ոլորտում որոշումների կայացմանը նպաստելու արդյունավետ միջոց:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) իրականացնում է իր տնօրինության տակ գտնվող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ակտիվների կառավարումը, ճանապարհների տեխնիկական վիճակի գնահատումը, տվյալների հավաքումը և վերլուծությունը:

4. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների (բացառությամբ Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների) ակտիվների տեխնիկական վիճակի գնահատումը, տվյալների հավաքումը, վերլուծությունը Նախարարությունը իրականացնում է ճանապարհների ուսումնասիրությունների և հետազոտությունների վերլուծություն իրականացնող կազմակերպության՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) միջոցով:

5. Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ակտիվների կառավարումը, դրանց տեխնիկական վիճակի գնահատումը, տվյալների հավաքումը և վերլուծությունը իրականացվում է համապատասխան մարզպետների աշխատակազմների կողմից:

6. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի (այսուհետ՝ ՏԿԵ նախարար) համապատասխան հանձնարարականի դեպքում որոշակի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տեխնիկական վիճակի գնահատումը, տվյալների հավաքումը և վերլուծությունը կարող է իրականացվել Հիմնադրամի կողմից:

2. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

7. Ճանապարհային ակտիվների կառավարման գործընթացը ներառում է՝

- 1) տվյալների հավաքագրումը և վերլուծությունը,
- 2) կարիքների գնահատումը,
- 3) ռազմավարական պլանավորումը և ակտիվների պահպանման բյուջետավորումը,
- 4) ակտիվների պահպանման և վերականգնման համար միջինժամկետ ֆինանսավորման առաջնահերթությունների սահմանումը և բյուջետավորումը,
- 5) ակտիվնարի պահպանման և վերականգնման նկատմամբ հսկողությունը և մշտադիտարկումը:

8. Ճանապարհների տնօրինողները՝ Նախարարությունը և մարզպետների աշխատակազմերը, պետք է իրականացնեն իրենց տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում գտնվող և դրանց մաս հանդիսացող կառուցվածքային

տարրերի երկրաչափական և այլ բնութագրերի, ճանապարհի ծածկի վիճակի, երթևեկության ինտենսիվության տվյալների հավաքագրման, ճանապարհի վթարավտանգ հատվածների՝ սև կետերի ուսումնասիրության և վերլուծության աշխատանքներ:

9. Ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի բաղադրիչներն են.
 - 1) համակարգ մուտքագրվող տվյալները.
 - 2) տվյալների շտեմարանը՝ Ճանապարհային ցանցի կառավարման համակարգը (Locator) .
 - 3) ճանապարհների զարգացման և կառավարման մոդելը՝ HDM-4.
 - 4) համակարգից ելքագրվող տվյալները,
 - 5) ծրագրերի իրականացումը:
10. ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի բաղադրիչները ներկայացված են Նկար 1-ում:

Նկար 1



3. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

11. Յուրաքանչյուր տարի պետք է գույքագրվեն և տեսաձայնագրվեն առնվազն 600 կմ ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում գտնվող և նրանց մաս հանդիսացող կառուցվածքային տարրերի երկրաչափական և այլ բնութագրերը: որոնք արտացոլվում են Ճանապարհային ակտիվների կառավարման էլեկտրոնային համակարգում (այսուհետ՝ ՃԱԿԷՀ): ՃԱԿԷՀ-ի բաղադրիչները ներկայացված են սույն կարգի 7-րդ գլխում:

12. Ավտոմոբիլային ճանապարհի վիճակը բնորոշվում է նրա շահագործման հատկանիշներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի 4 նոյեմբերի N 1419-Ն որոշման 1-ին հավելածին համապատասխան: Ավտոմոբիլային ճանապարհի վիճակի գնահատման ցուցանիշ է սահմանվում ծածկի փոսայնությունը (փոսեր, ցանցային ճաքեր, ծածկի մաշվածություն և փոքր, տեղային նստվածքներ):

13. Նոր կառուցված, վերակառուցված, հիմնանորոգված և միջին նորոգված ճանապարհահատվածների ծածկի վիճակը գնահատվում է անհարթության միջազգային ցուցիչի մեթոդաբանության հիման վրա՝ ՏԿԵ նախարարի 2022 թվականի հուլիսի 12-ի N 26-Լ հրամանի պահանջներին համապատասխան, որի նպատակն է ճանապարհներից օգտվողների համար ապահովել ճանապարհների ծածկը գնահատելու ամենակարևոր պայմաններից մեկը՝ որակյալ ճանապարհով անվտանգ երթևեկությունը:

12. Երթևեկության ինտենսիվության տվյալները հաշվարկվում և հավաքագրվում են ավտոմոբիլային տրանսպորտի ինտենսիվությունը չափող ստատիկ և շարժական հաշվիչներով:

13. Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության մակարդակը որոշվում է հիմք ընդունելով ճանապարհների տվյալ հատվածներում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների (այսուհետ՝ ՃՏՊ-ներ) տվյալները և այդ հատվածներում իրականացված վերլուծության արդյունքները:

14. Ճանապարհի վթարավտանգ հատվածների (սև կետերի) ուսումնասիրությունը և վերլուծությունը իրականացվում է ՃՏՊ-ների վերջին երեք տարվա վիճակագրական տվյալների հիման վրա, որոնք արտացոլվում են ՃԱԿԷՀ-ում: ՃՏՊ-ների կուտակման վայրերը բնորոշվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 1699-Ն

որոշման 3-րդ հավելվածով ՃՏՊ-ների կուտակման վայրի կամ ճանապարհի վթարավտանգ հատվածի համար սահմանված չափանիշներին համապատասխան:

15. Մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով «Տրանսպորտային ոլորտի կլիմայական հարմարվողականության ծրագրի» ընդունումը՝ բնական աղետներից խոցելի հատվածների վերլուծությունը իրականացվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված արտակարգ իրավիճակների կամ բնական աղետների հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների դեպքում հրատապ աշխատանքներն իրականացնելու անհարժեշտություն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի 4 նոյեմբերի N 1419-Ն որոշման 1-ին հավելվածի պահանջներին համապատասխան:

4. ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

16. Ճանապարհային ակտիվների կառավարման գործընթացում կարիքների գնահատումը իրականացվում է ելնելով ավտոմոբիլային ճանապարհային ցանցում գտնվող ճանապարհների կամ դրանց հատվածների վիճակից և անվտանգության մակարդակից:

17. Հավաքագրված տեխնիկական տվյալների հիման վրա համակարգչային HDM-4 տնտեսագիտական վերլուծական ծրագրի միջոցով կազմվում են հիմնական ճանապարհային ցանցի միջպետական և հանրապետական նշանակության, ինչպես նաև ՃԱԿԷՀ-ում առկա մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ վերականգնման ծրագրերի վերաբերյալ առաջարկությունները:

18. Եթե ՃԱԿԷՀ-ում առկա չեն մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պարամետրերի վերաբերյալ տվյալներ, ապա դրանք Նախարարություն են ներկայացվում մարզպետների աշխատակազմերի կողմից՝ ՏԿԵ նախարարի 2025 թվականի մարտի 7-ի N15-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) «Ձև 1»-ին համապատասխան:

19. Ճանապարհների վթարավտանգ հատվածների (սև կետերի) ուսումնասիրության և վերլուծության արդյունքները, ինչպես նաև հաշվետու տարվան հաջորդող տարվա համար ճանապարհային անվտանգության բարելավման միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ առաջարկությունները Հիմնադրամի կողմից Նախարարություն են ներկայացվում ոչ ուշ քան ուսումնասիրման տարվա վերջին աշխատանքային օրը:

5. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԲՅՈՒՋԵԱՎՈՐՈՒՄԸ

20. Ճանապարհային ակտիվների կառավարման գործընթացում կարիքների գնահատման արդյունքների հիման վրա իրականացվում է ճանապարհային ակտիվների կառավարման ռազմավարական պլանավորում և դրանց պահպանման բյուջետավորում:

21. Ավտոմոբիլային ճանապարհների ռազմավարական պլանավորումը ճանապարհային ենթակառուցվածքի զարգացման նպատակների և գործընթացների սահմանումն է՝ ճանապարհային ցանցի զարգացման ցանկալի արդյունքներին հասնելու համար:

22. Ճանապարհային ակտիվների ռազմավարական պլանավորման ժամանակ հաշվի են առնվում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունը և ճանապարհային երթևեկության մասնակիցների կարիքներն ու շահերը:

23. Ճանապարհային ակտիվների ռազմավարական պլանավորման գործընթացի արդյունքում ավտոմոբիլային ճանապարհների տնօրինողները մշակում և իրականացում են ճանապարհային ցանցի ընթացիկ և կապիտալ ֆինանսավորում պահանջող ծրագրեր:

24. Ընթացիկ տարում հաջորդ տարվա բյուջետային հայտի նախապատրաստման համար ավտոմոբիլային ճանապարհների վիճակի ճշգրտված գնահատման արդյունքներով միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող առանձին պահպանման հանձնվող կամուրջների և թունելների պահպանման աշխատանքների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվում Նախարարություն մինչև ընթացիկ տարվա հունիսի 25-ը:

25. Համապատասխան մարզպետների աշխատակազմերի տնօրինության տակ գտնվող մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների պլանավորումը և բյուջետավորումը իրականացվում են վերջիններիս կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի 4 նոյեմբերի N 1419-Ն որոշման 1-ին հավելածին համապատասխան:

26. Կապիտալ ֆինանսավորում պահանջող ավտոմոբիլային ճանապարհային ցանցի միջպետական և հանրապետական, ինչպես նաև ՃԱԿԷՀ-ում առկա մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կարճաժամկետ և միջնաժամկետ վերականգնման ծրագրերի HDM-4 վերլուծության մանրամասն հաշվարկները Հիմնադրամի կողմից ամփոփելուց և վերլուծվելուց հետո Նախարարություն են ներկայացվում ոչ ուշ քան ուսումնասիրման տարվա վերջին աշխատանքային օրը:

27. Արտաքին աղբյուրներից՝ կապիտալ ֆինանսավորում պահանջող ճանապարհաշինական ծրագրերի պլանավորումը և բյուջետավորումը իրականացվում է Հիմնադրամի կողմից՝ միջազգային վարկային կամ դրամաշնորհային համաձայնագրերի պահաններին համապատասխան:

28. Տրանսպորտային ոլորտի կլիմայի փոփոխության ռիսկերի գնահատման և հարմարվողական ներդրումային ծրագրով նախատեսված միջոցառումները պլանավորվում և իրականացվում են այդ ծրագրով նախատեսված առաջնահերթություններին և ժամկետներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համապատասխան որոշման հաստատումից հետո:

6. ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋԻՆԺԱՄԿԵՏ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ

29. Ճանապարհային ցանցի ընթացիկ և կապիտալ ֆինանսավորում պահանջող Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով և արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջե ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերի տարեկան ֆինանսական միջոցների չափը որոշվում է միջնաժամկետ ծախսերի ծրագրերով ճանապարհային ոլորտի գծով հաստատված սահմանաչափերի շրջանակում:

30. Տվյալ տարվան հաջորդող տարվա կապիտալ ֆինանսավորում պահանջող Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության առաջնահերթությունների որոշման հիմնական ուղղությունները և դրանց զարգացման համար կատարվող ֆինանսական ներդրումների տեղաբաշխման՝ ռազմավարական

տարբեր չափորոշիչների վրա հիմնված առաջնահերթությունները որոշվում են ՏԿԵ նախարարի 2025 թվականի մարտի 7-ի N 15-Լ հրամանով սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

31. Եթե սույն կարգի 5-րդ գլխով նախատեսված ճանապարհային ակտիվների կառավարման ռազմավարական պլանավորում և դրանց պահպանման բյուջետավորման արդյունքում տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացիկ և կապիտալ ֆինանսավորում պահանջող ծրագրերի (միջոցառումների) ֆինանսական միջոցների չափը գերազանցում է միջնաժամկետ ծախսերի ծրագրերով ճանապարհային ոլորտի գծով հաստատված սահմանաչափերից, ապա ընթացիկ և կապիտալ ծրագրերի առաջնահերթությունները վերանայվում են հետևյալ չափանիշներով.

- 1) իրականացման ընթացքում գտնվող տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերով ճանապարհային ենթակառուցվածքների կառուցման կամ վերականգման հրատապությունը.
- 2) որևէ բնակավայրին կամ համայնքին կապող այլընտրանքային ճանապարհների բացակայությունը.
- 3) ճանապարհային անվտանգության բարելավման միջոցառումների հրատապությունը.
- 4) բնական աղետներից խոցելի հատվածներում հրատապ աշխատանքներ իրականացնելու հրատապությունը.
- 5) միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների ապահովմանը:

31. Տվյալ տարվան հաջորդող տարվա և առաջիկա երեք տարվա ընթացիկ և կապիտալ ֆինանսավորում պահանջող ծրագրերի (միջոցառումների) ծախսերը նախատեսվում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և պետական բյուջեի նախագծերի կազմման մեթոդական ցուցումներին համապատասխան:

32. Սույն կարգով նախատեսված ընթացիկ և կապիտալ ֆինանսավորում պահանջող ծրագրերի (միջոցառումների) ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումն իրականացվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

33. Ճանապարհային ակտիվների վիճակի ու շարժի, ինչպես նաև հասույթների և ծախսերի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքումը, գրանցումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը, ներկայացումը և հրապարակումը իրականացվում է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության ֆինանսանրի նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի N 725-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջներին համապատասխան՝ Նախարարության տնօրինության տակ գտնվող ճանապարհային ակտիվների մասով՝ Նախարարության ֆինանսական, հաշվապահական հաշվառման և համայնքային բյուջեների վարչության կողմից, իսկ մարզպետների աշխատակազմերի տնօրինման տակ գտնվող ճանապարհային ակտիվների մասով՝ համապատասխան մարզպետների աշխատակազմերի ֆինանսական և հաշվապահական հաշվառման ստորաբաժանումների կողմից:

34. Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, վերակառուցման, հիմնանորոգման և միջին նորոգման աշխատանքների արդյունքում ապամոնտաժված ճանապարհային ակտիվները՝ շարժական գույքը (այդ թվում նաև ճանապարհաշինական աշխատանքների ընթացքում իրականացված ֆրեզման աշխատանքների արդյունքում ֆրեզված ասֆալտբետոնը) պետք է գնահատվեն և հաշվառվեն Նախարարության հաշվեկշռում դրանց հաշվեկշռային արժեքով:

35. Սույն կարգի 34-րդ կետում նշված ապամոնտաժված ճանապարհային ակտիվները պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին հատկացվում են ՏԿԵ նախարարի համապատասխան հանձնարարականներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

6. ԱԿՏԻՎՆԱՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

36. Ճանապարհային ակտիվների պահպանման և վերականգման նկատմամբ հսկողությունն

ու մշտադիտարկումը ճանապարհային ակտիվների կառավարման գործընթացի կարևորագույն մասն է, որը նպատակ ունի չափել ճանապարհների ակտիվների կառավարման նպատակներին հասնելու ուղղությամբ առաջընթացը:

37. Հիմնադրամը իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, նախարարի հրամաններով և «Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն, ուսումնասիրություններ և փորձաքննություններ» դրամաշնորհային ծրագրի իրականացման համար կնքված դրամաշնորհային պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) Հիմնադրամին վերապահված ճանապարհային ակտիվների գնահատման և կատարված աշխատանքների նկատմամբ հսկողությունը:

38. Նախարարությունը իրականացվում է միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների (բացառությամբ Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների) և ՃԱԿԷՀ-ում առկա մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ակտիվների պահպանման և վերականգման նկատմամբ մշտադիտարկումը՝ յուրաքանչյուր տարի Հիմնադրամի հետ կնքված դրամաշնորհային պայմանագրով «Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն, ուսումնասիրություններ և փորձաքննություններ» դրամաշնորհային ծրագրի կատարման ենթակա գործողություններին և ակնկալվող արդյունքներին հասնելու ուղղությամբ առաջընթացը չափելու համար:

39. Հիմնադրամը սույն կարգի 38-րդ կետում նշված դրամաշնորհային պայմանագրով սահմանված ժամկետներում Նախարարություն է ներկայացնում ճանապարհային ակտիվների հսկողության, ուսումնասիրությունների և փորձաքննությունների վերաբերյալ հաշվետվություն՝ սույն կարգի Նկար 1-ում նշված համակարգից ելքագրվող տվյալների մասով:

40. Մարզպետների աշխատակազմերի տնօրինության տակ գտնվող մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ակտիվների նկատմամբ հսկողությունը և մշտադիտարկումը իրականացնում են համապատասխան մարզպետների աշխատակազմերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով մարզպետներին աշխատակազմերին վերապահված լիազորությունների շրջանակում:

41. Մարզպետների աշխատակազմերը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը Նախարարություն են ներկայացնում իրենց տնօրինության տակ գտնվող մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ակտիվների կառավարման,

տվյալների հավաքման և վերլուծության իրականացման վերաբերյալ հաշվետվություն:


42. Ճանապարհային ակտիվների կառավարման վերաբերյալ օբյեկտիվ և օպերատիվ տեղեկատվություն տրամադրելու և դրանց բարելավման նպատակով երթևեկության մասնակիցներից և Հայաստանի Հանրապետության բնակչությանից կարծիքների և բողաքների հետ կապված խնդիրների արձագանքումը իրականացվում է հետադարձ կապի մեխանիզմով՝ ՃԱԿԷՀ-ի «Թեժ գծի» ծառայության և «Ճանապարհների տեղեկատու» (Arm roads info) բջջային հավելվածի միջոցով:

7. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ (ԼՈԿԱՏՈՐ)

43. Ճանապարհային ցանցի կառավարման էլեկտրոնային համակարգը (ՃԱԿԷՀ) բաղկացած է հետևյալ բաժիններից (տե՛ս Նկար 2-ը).

- 1) «Ճանապարհի գույքագրում»,
- 2) «Ճանապարհի մոնիթորինգ»,
- 3) «Ծրագրերի մշակում»,
- 4) «Երթևեկության անվտանգություն»,
- 5) «Թեժ գիծ»,
- 6) «Շինարարական միջամտություններ»,

Նկար 2



44. ՃԱԿԷՀ-ի կառավրումն իրականացվում է համապատասխան բաժինների «Ադմինիստրատորների» և «Օգտատերերի» կողմից:

45. ՃԱԿԷՀ-ի լեզուն՝ հայերենն է, իսկ «Թեժ գծի» բջջային հավելվածն եռալեզու է՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

7.1 «Ճանապարհի գույքագրում» բաժին

46. «Ճանապարհի գույքագրում» բաժինը ներառում է տեղեկություններ ճանապարհներն և տրանսպորտային հանգույցներին առկա տարրերի վերաբերյալ (տե՛ս Նկար 3-ը):


Նկար 3

Պայմանանաիչ և համար	Անվանում	Երկարություն (կմ)	Նշանակություն
Մ-1	Երևան - Գյումրի - Վրաստանի սահման	173.7	Միջպետական
Մ-2	Երևան - Երասխ - Գորիս - Մեղրի - Իրանի Իսլամական Հանրապետության սահման	384.3	Միջպետական
Մ-2-8	Մոտեցում Նախիջևանի սահմանին Ագարակից (Սյունիքի մարզ)	6.3	Միջպետական
Մ-3	Թուրքիայի Հանրապետության սահման - Մարգարա - Վանաձոր - Տաշիր - Վրաստանի սահման	183.7	Միջպետական
Մ-3-1	Վաղարշապատի շրջանց	4.6	Միջպետական
Մ-4	Երևան - Սևան - Իջևան - Աղբրեջանի Հանրապետության սահման	148.2	Միջպետական
Մ-5	Երևան - Լոմակո - Թուրքիայի Հանրապետության սահման	63.1	Միջպետական

47. «Ճանապարհի գույքագրում» բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից (տե՛ս Նկար 4-ը)՝

- 1) «Պաստառ և հագուստ»,
- 2) «Արհեստական կառույցներ»,
- 3) «Կոմունիկացիաներ և սպասարկման կետեր»,
- 4) «Կահավորանք»,
- 5) «Վարչարածքային բաժանում»:

Նկար 4



48. Յուրաքանչյուր ենթաբաժին բաղկացած է ձևաչափերից՝ ընդհանուր թվով 25 հատ, որոնցում մանրամասն նկարագրվում են ճանապարհի այս կամ այն տարրերը: Նախատեսված է ճանապարհային տարրերի տեղորոշումը քարտեզի վրա, ինչպես նաև որոշ տարրերի լուսանկարների կցում (օրինակ՝ արհեստական կառույցներ) (տե՛ս Նկար 5-ը):

Նկար 5

Գլխավոր **Գույքագրում** Սոնիթորինգ Ծրագրերի մշակում Երթևեկության անվտանգություն Թեմ գիծ Ըին. միջամտություններ admin

Մ-4 Արհեստական կառույցներ Կամուրջներ Տեղակ... Ավելացնել

Մ-4 ԵՐԵՎԱՆ - ՍԵԻԱՆ - ԻՋԵԿԱՆ - ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ

<input type="checkbox"/>	Տեղակայում (կմ+մմմ)	Անվանում, Նկարագրություն	Երկար. (մ)	Լայն. (մ)	Նյութ	Փաբարիտ	Թռիչքների քանակ	Ծանոթություն	Նկարներ
<input type="checkbox"/>	11+329	Կերին Պողկի տ/հ	37	28.0	Հավաքովի ե/բ	2x11+2x0.2	3		 
<input type="checkbox"/>	11+640	Հատում Մ-15 ա/ճ-ի հետ	80	29.0	Հավաքովի ե/բ	2x11+2x1	3	թեք կամուրջ 7մ	
<input type="checkbox"/>	14+796	Տեղական ճանապարհ	33	28.5	Հավաքովի ե/բ	2x11+2x0.9	3		


49. «Ճանապարհի գույքագրում» բաժում նախատեսված են գործիքներ տվյալների հետ աշխատելու համար՝ հարցումներ, ֆիլտրներ, հաշվետվություններ և այլն: Համակարգում ներառված տվյալները հանարավոր է վերափոխել XLS ձևաչափի՝ հետագա վերլուծություններ կատարելու համար:

7.2 «Ճանապարհի մոնիթորինգ» բաժին

50. «Ճանապարհի մոնիթորինգ» բաժինը իր մեջ ներառում է հետևյալ ենթաբաժինները (տե՛ս Նկար 6-ը)՝


- 1) Հաշվետվություններ»,
- 2) Պահպանման աշխատանքների վերահսկում»,
- 3) Առաջադրանքներ»,
- 4) Հայտնաբերված թերություններ»,
- 5) Սպասարկող կազմակերպություններ»:

Նկար 6



51. «Հաշվետվություններ» ենթաբաժինը ներկայացնում է ճանապարհների վիճակի ուսումնասիրությունը ըստ տարածաշրջանների (տե՛ս՝ Նկար 7-ը):


Նկար 7



52. «Պահպանման աշխատանքների վերահսկում» ենթաբաժինը ներկայացնում է ճանապարհների վրա կատարվող աշխատանքների վերահսկումը, ենթաբաժինը ներկայացնում է ճանապարհների վրա կատարվող աշխատանքների վերահսկումը, որի տվյալները ստացվում են համակարգին կցված բջջային հավելվածից:

53. ՃԱԿԷՀ-ն հնարավորություն է տալիս որոնման դաշտում տվյալ ճանապարհատվածի աշխատանքը կատարողի անունով և ժամանակահատվածով ֆիլտրելով կատարել որոնում (տես՝ Նկար 8-ը):

Նկար 8



54. «Առաջադրանքներ» ենթաբաժինը ներկայացնում է ճանապարհների վրա կատարվող աշխատանքների բացված, ընդունված և ավարտված առաջադրանքների և դրանք կատարողների տվյալները:

55. Առաջադրանքները ամեն մի օգտվողի համար ստեղծվում են ադմինիստրատոր իրավասություն ունեցող օգտվողի կողմից:

56. Օգտվողը ստանալով իրեն հասցեագրված առաջադրանքը, բջջային հավելվածի միջոցով կարողանում է ընդունել, կատարել և ավարտել առաջադրանքները (տես՝ Նկար 9-ը):

Նկար 9

Browser address: https://test16.locator.am/monitoring_task?tab=active

Navigation: Բառարան, Գլխավոր, Գույքագրում, Մոնիթորինգ, Ծրագրերի մշակում, Երթևեկության անվտանգություն, Թեմ գիծ, Հիմ. միջամտություններ, admin

Home / Մոնիթորինգ / Առաջադրանքներ

Buttons: Բացված, Ընդունված, Ավարտված

ԱՌՆԱՀԱՐԱՆՔՆԵՐ

Ստատուս	Մեզանում	Միջոց	Ընդունված է	Նկարագրություն	Բարտեզ	Կատարվել է %	Պլանավորում
<input type="checkbox"/>	Արթուր Հովհաննիսյան	2020-01-01	-	Պլանային ստուգայք		0%	
<input type="checkbox"/>	Կարեն Թորոսյան	2020-01-01	-	Պլանային ստուգայք		0%	
<input type="checkbox"/>	Գոռ Մարգարյան	2020-01-01	-	Պլանային ստուգայք		0%	
<input type="checkbox"/>	Կարապետ Հրուսիսյան	2020-01-01	-	Պլանային ստուգայք		0%	
<input type="checkbox"/>	Սարգիս Դարսյան	2020-01-01	-	Պլանային ստուգայք		0%	

Օգտվողի կատարած աշխատանքի հիման վրա երևում է նրա անցած ճանապարհի հետագիծը (տե՛ս Նկար 10-ը):

Նկար 10



57. Հայտնաբերված թերությունների ենթաբաժինը ներկայացնում է ճանապարհատվածներ վրա հանդիպող չշտկված, շտկված թերությունները, դրանց նկարագրությունը և տեղակայումը քարտեզի վրա, այս տեղեկությունը նույնպես ստանում ենք բջջային հավելվածի օգնությամբ (տե՛ս Նկար 11-ը):

Նկար 11

Ձտկված Ըտկված Միայն արձանագրություն

ՆԱՅՏԱԲԵՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեղծվել է	Ճանապարհ	Սպասարկող ՇՇԸ-ի անուն	Լաբորատորիան	Վերջնական	Քարտիկ	Փնտրյալի Լուսանկար	Ավարտվում է	Փնտրյալի Տեսակ	Էլ. Հասցե
30-10-2019	Երևան - Երասան - Գորիս - Մեղրի - Բյանի Բյանական Հանրապետության սահման	«Կասպանի ԾՇԸ» ՍՊԸ	Test	31-10-2019			77-րդ անցիկ	Արև և օտար արտադրանք	
30-10-2019	Երևան - Գյումրի - Վրաստանի սահման	«Ապարանի ԾՇԸ» ԲԲԸ	Test	31-10-2019			77-րդ անցիկ	Չմաքույն կոլային ատոմներ և/կամ վազեր	
30-10-2019	/2-36/ (Բեռ) - Արձախեր - Չիկաթի	«Տավուշ ԾՇԸ» ՓԲԸ	Km 26 500 - 26 800 kovanaki tracum ev harteum	09-11-2019			66-րդ անցիկ	Կողմաձուլ քարեր	

58. «Սպասարկող կազմակերպություններ» ենթաբաժինը ներկայացնում է ճանապարհատեղագրի վրա կատարվող աշխատանքները սպասարկող կազմակերպությունները և իրենց տվյալները (տե՛ս Նկար 12-ը):

Նկար 12

Սպասարկող կազմակերպություններ

Անվանում Գե. Էլ. Հասցե


Անվանում	Գե.	Էլ. Հասցե
Կոտայքի Ծան. Շին	055-55-55	sevak.minasyan@locator.am
«Ապարանի ԾՇԸ» ԲԲԸ	111111	test@test.am
«Մոստովիկ» ՍՊԸ	+0236 6-46-26	mostoviktd@gmail.com
«Մեղրու ԾՇԸ» ՍՊԸ	+374 43605142, +374 94005362	meghruchanshin@mail.ru
«Արարատ-Ճանշին» ՍՊԸ	+374 91412979, +374 93605140	araratchanshin@mail.ru
«Կապանի ԾՇԸ» ՍՊԸ	+0285 2-43-62	Kapanichshsh@mail.ru
«Ճանապարհ» ՍՊԸ	+0261 60-01-2	road@road.am
«Ճանշինվարպետ» ՓԲԸ	+374 93955565, +374 98834051	davitdavyan20200@mail.ru
«Թումանյանի ԾՇԸ» ԲԲԸ	+374 900940, +374 900943	tumanyanitshsh@mail.ru

7.3 «Ծրագրերի մշակում» բաժին

59. «Ծրագրերի մշակում» բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները (տե՛ս Նկար 13-ը).


- 1) «Ճանապարհների ուսումնասիրություն և գնահատում»,
- 2) «Վերականգնման առաջարկվող ճանապարհահատվածներ»,
- 3) «Երթևեկության ինտենսիվության հաշվառում»:

Նկար 13



60. «Ճանապարհների ուսումնասիրություն և գնահատում» ենթաբաժինը ներկայացնում է ճանապարհների ԱՄՅ (IRI) գործակցի չափման արդյունքներ և դրա ցուցադրումը քարտեզի վրա (տե՛ս Նկար 14-ը):

Նկար 14



61. «Վերականգնման առաջարկվող ճանապարհահատվածներ» ենթաբաժինը ներկայացնում են HDM-4 տնտեսագիտական վերլուծական մոդելով հիմնավորված այն

ճանապարհահատվածները, որոնք առաջարկվում են վերականգնման համր, դրանց տվյալներն և քարտեզային արտապատկերումը (տե՛ս Նկար 15-ը):

Նկար 15


Պայմանանոցի եր. համար	Անվանում	Սկիզբ	Ավարտ	Աշխատանքի Տեսակը	Արժեք, Մլն. Գույար	Ուղղություն	Տև-19 (EIRR)
U-4	Երևան - Սևան - Բջևան - Աղբեջանի Հանրապետության սահման	10.3	19.4	Սակերեսային մշակում	1.434	Ձախ	19.5
U-4	Երևան - Սևան - Բջևան - Աղբեջանի Հանրապետության սահման	10.3	16	Սակերեսային մշակում	0.9	Աջ	17.5
U-4	Երևան - Սևան - Բջևան - Աղբեջանի Հանրապետության սահման	16	24.9	Միաշերտ ա/բ	2.83	Աջ	33
U-4	Երևան - Սևան - Բջևան - Աղբեջանի Հանրապետության սահման	17.5	18.6	Միաշերտ ա/բ	10.06	Ձախ/Աջ	30.8
U-4	Երևան - Սևան - Բջևան - Աղբեջանի Հանրապետության սահման	17.5	18.6	Միաշերտ ա/բ	10.06	Ձախ/Աջ	30.8
U-4	Երևան - Սևան - Բջևան - Աղբեջանի Հանրապետության սահման	19.2	21.6	Միաշերտ ա/բ	16.46	Ձախ/Աջ	34.9
U-4	Երևան - Սևան - Բջևան - Աղբեջանի Հանրապետության սահման	19.2	21.6	Միաշերտ ա/բ	16.46	Ձախ/Աջ	34.9

62. «Երթևեկության ինտենսիվության հաշվառում» ենթաբաժինը բաղկացած է մի քանի հաշվետվություններից (տե՛ս Նկար 16-ը)

- 1) «Վերբեռնել»,
- 2) «Տարիների միջինացված տվյալներ»,
- 3) «Հաշվետվություն ընտրված կիլոմետրերի միջակայքում»,
- 4) «Հաշվետվություն ըստ տարիների»:

63. «Երթևեկության ինտենսիվության հաշվառում» ենթաբաժինը իրականացվում է երթևեկության ինտենսիվության տվյալների պահպանումն և վերլուծությունը: Երթևեկության ինտենսիվության տվյալները պետք է արտապատկերվեն քարտեզի վրա:

Նկար 16




7.4 «Երթևեկության անվտանգություն» բաժին

64. «Երթևեկության անվտանգություն» բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

- 1) «Անվտանգության ապահովում»,
- 2) «Պատահարների կուտակման կետեր»:

65. Անվտանգության ապահովում ենթաբաժինը ներկայացնում է մուտքագրված պատահարների մասին ինֆորմացիան՝ ցուցադրելով այն քարտեզի վրա (տե՛ս Նկար 17-ը):


Նկար 17



66. Պատահարները նախատեսվում է բեռնել ՃՈ-ի կողմից տրամադրված տվյալների բազայից, սակայն կա պատահարի ձեռքով խմբագրման հնարավորություն (տե՛ս Նկար 18-ը):

Նկար 18

Մարզը՝ Կոտայք	Քաղաքը/Տարածաշրջանը՝ Կերին Պողկի	Դեպքի համարը՝	Օրը,Ամիսը,Տարեթիվը,Ժամը՝ 04-06-2019	Պատահարի ծանրության աստիճանը՝ Նյութական վնասով
ՃՏՊ-ին մասնակից տրանսպորտային միջոցներ քանակը՝		Տուժած վարորդների թիվը՝		Տուժած ուղևորների թիվը՝
ՃՏՊ պահին տեսանելիությունը և եղանակային պայմանները՝ Արևային		Լուսային պայմաններ՝ Գիշերը՝ փողոցային լուսավորվածությամբ	Փախուստ ՃՏՊ-ի վայրից՝ Չի փախել	Երթևեկություն՝ Միակողմանի
Բաժանարար գոտի՝ Չկա		Երթևեկության կարգավորում՝ Բացակայում է		Պատահարի տեսակները՝ Խոչընդոտի վրաեթոթ
Բախման տեսակը՝ Կողային		Պատահարի տեսակները՝ Խոչընդոտի վրաեթոթ		Բախման տեսակը՝ Կողային
Ծանապարհի հատակագծի և պրոֆիլի տարրերը՝ Հատակագծում ուղիղ		Ծանապարհի կախվորանքը և ինժեներական կառույցները՝ Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետ		Ծածկի տեսակը՝ Խճային
Երթևեկի մասի վիճակը՝ Ծածկված կոշտացած ձյունով		Ծանապարհի №՝		Կմ՝ 100մ
ԾՏՊ-ների առաջացմանը նպաստող պայմաններ՝ Անբավարար տեսանելիություն		Ծանապարհի №՝		Կմ՝
Վարորդի անունը, ազգանունը՝		Վարորդական վկայականի սերիան և համարը՝		
Հաշվառման համարակիճը՝	Տրանսպորտային միջոցի մակնիճը՝	Հաշվառման վկայագրի սերիան և համարը՝	Վարորդի անունը, ազգանունը՝	Վարորդական վկայականի սերիան և համարը՝



Խմբագրել Չեղարկել

67. «Անվտանգության ապահովում» բաժնում առկա է պատահարների ֆիլտրման հնարավորություն (տե՛ս Նկար 19-ը):

Նկար 19

Պատահարների ֆիլտր ×

Ամսաթվի սկիզբ	Ամսաթվի ավարտ	Մարզ	Քաղաքը/Տարածաշրջանը
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
Պատահարների շտապիղ (մ)	Ծանապարհ	Ծանապարհի սկիզբ (կմ)	Ծանապարհի ավարտ (կմ)
<input type="text" value="100"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>


Կուտակման կետեր

Ֆիլտրել Չեղարկել

68. «Պատահարների կուտակման կետեր» ենթաբաժինը նախատեսված է մուտքագրված պատահարների հիման վրա ստեղծել կուտակման կետեր (Black spots)՝ նախորդ բաժնում

Ֆիլտրների օգնությամբ առանձնացնելով իրարից որոշակի հեռավորության վրա տեղի ունեցած պատահարները (տե՛ս Նկար 20-ը):


Նկար 20



7.5 «Թեժ գիծ» բաժին

69. «Թեժ գիծ» բաժինը նախատեսված է Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն ստանալու և հանրությանը մատուցելու համար: Գործում է հեռախոսային բջջային հավելված, որը հնարավորություն է ընձեռում տեղեկություն ստանալ ճանապարհներին տեղի ունեցող շինարարության, քարաթափումների, եղանակային պայմաններից կախված ճանապարհների անցանելիության վերաբերյալ: ՃԱԿԷՀ-ում ներառված են ավտոմոբիլային ճանապարհները սպասարկող կապալառու կազմակերպությունների, հիվանդանոցների, ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության հենակետերի գտնվելու վայրերը և հեռախոսահամարները, որոնց կարելի է դիմել արտակարգ իրավիճակի (ավտոմեքենայի խափանում, վթար, ծյունաբուք և այլն) դեպքում (տե՛ս Նկար 21-ը):

Նկար 21




70. Բջջային հավելվածի օգտատերը հաղորդագրության միջոցով ստանում է դեպքերի և իրադարձությունների մասին տեղեկատվություն:

71. Բջջային հավելվածում կարելի է ընտրել և տեսնել այն իրադարձությունները և ստատիկ օբյեկտները, որոնք ցանկանում եք տեսնել քարտեզի վրա՝ անջատելով և միացնելով այս կամ այն տեսակի իրադարձությունների կամ ստատիկ օբյեկտների ցուցադրումը:

72. ՃԱԿԷՀ-ն ունի տեղորոշման հնարավորություն, որն ավելի դյուրին է դարձնում աշխատանքը քարտեզի հետ:

73. ՃԱԿԷՀ-ում առկա է ուղեցույց, որը պարունակում է օգտակար տեղեկատվություն քաղաքացիների համար (տե՛ս Նկար 22-ը):



74. Հավելվածը հնարավոր է ներբեռնել՝ (<https://clck.ru/lkjuh>), ինչպես նաև App Store-ից և Play Market-ից «Arm roads info» կամ «Roadmap hotline» անվանումով:

7.6 «Շինարարական միջամտություններ»

75. «Շինարարական միջամտություններ» բաժինը բաղկացած է նախկինում կատարված շինարարական միջամտությունների մանրամասնած տվյալների ցանկից և դրանց քարտեզային գծապատկերումից (տե՛ս Նկար 23 և 24-ը):

Նկար 23

https://test16.locator.am/construction_intervention?road_id=7&start_date=2018&end_date=2019

Հինարարական միջամտություններ

Մ-4 2018 2019 Փնտրել Ավելացնել

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Կող	Ճանապարհ	Սկիզբ	Ավարտ	Երկարություն(կմ)	Արժեքը, Մլն. Դրամ	Մեկնաբանություն	Ճանապարհի Նորոգման Կարգավիճակ	Ֆինանսավորման Աղբյուր	Նորոգման Տարեթիվ	Քարտեզ
<input type="checkbox"/>	Մ-4	Երևան - Սևան - Իջևան - Աղրբեջանի Հանրապետության սահման	32+700	36+000	3.3	159.0	Աջ երթևեկամաս	Միջին նորոգում	Պետ. բյուջե	2018	
<input type="checkbox"/>	Մ-4	Երևան - Սևան - Իջևան - Աղրբեջանի Հանրապետության սահման	35+500	40+100	4.6	228.5	Չափ երթևեկամաս	Միջին նորոգում	Պետ. բյուջե	2018	
<input type="checkbox"/>	Մ-4	Երևան - Սևան - Իջևան - Աղրբեջանի Հանրապետության սահման	40+100	57+000	16.9	574.3	Չափ երթևեկամաս	Կերակրողում	Պետ. բյուջե	2018	

Ընդամուր քանակ՝ 3
Ցուցադրվում է՝ 3

